ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրութիւն Ներքին Գործոց Տ. Նախարարի անունով, որով յայտնուեց, որ Նրա գրութեան համաձայն, շրջաբերական կոնդակներով պատուիրուեց բոլոր Ռուսաստանի թեմական Առաջնորդներին գանձանակ շրջացնել թեմերի հայոց եկեղեցիներում՝ պատերազմում ընկած զինուորների և նրանց ընտանեաց օգտին. նոյեմբ. 2. թ. 2392։

Գրութիւն Սուչաւայի Հայոց Խորհրդի անունով, որով շնորհակալութիւն յայտնուեց Նորին Սրբութեան Ազգիս Վեհափառ Հայրապետի անուանակոչութիւնը շնորհաւորելու առթիւ. 2 նոյեմբ. թ. 2396։

Գրութիւն Բաղուի գործակալ Տ. Զաւէն վարդապետի անունով, որի հետ ուղարկուեց Կ. Պոլսի դպրոցասէր Տիկնանց Ընկերութեան կանոնադրութիւնից 2 օրինակ յանձնելու Տիկ. Սոֆիա Ադամեանին. 3 նոյեմբ. թ. 2397։

Գրութիւն Ղարաբաղի Կոնսիստորիայի նախանդամ Տ. Եղիշէ վարդապետ Ա.Հարոնեանի անունով, որով յանձնարարուեց ստանալ և ուղարկել Շուշեցի հանգուցեալ Իսահակ Թադէոսեանի ընտանիքի կողմից կրթական նպատակով նուիրաբերած Նորին Սրբութեան անունով 5000 ռուբլի գումարը. 3 նոյեմբ. թ. 2398։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկուեց Մայր Աթոռի միաբան հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոս Գառնակերեանի կահկարասեաց ցուցակն և պատուիրուեց ստանալ նրա թողած 1003 ռուբլի առձեռն գումարն և № 54353—1363. 4000 ռուբլի տոմսը՝ փողերը գանձելու համար. 4 նոյեմբ. թ. 2403։

Գրութիւն Մոսկուայի Հայոց Եկեղեցական Խորհրդի անունով, որի հետ ուղարկուեց Վարագայ վանքի հոգա-

բարձութեան խորհրդից վանքին նուիրաբերած 100 ռուբլու անդորրագիրը. 6 նոյեմբ. թ. 2417։

Գրութիւն Ժամհարեանց եղբ. անունով, որի հետ ուղարկուեց Վարագայ վանքի հոգաբարձութեան անդորրագիրը՝ վանքին նուիրաբերած 500 ռուբլու համար. 6 նոյեմբ. թ. 2417։

Կոնդակ Ասարախանի թեմի Լաբինսկայա աւանի ծխական հոգաբարձութեան անունով, որով հաստատուեց աւանում բացուած եկեղեցական—ծխական դպրոցը. 6 նոյեմբ. թ. 2424։

Գրութիւն Կ. Պոլսի Ամենապատիւ Պատրիարքի անունով, որով ուղարկուեց Տփխիսեցի հանգուցեալ Կարապետ Վարդանեանի կտակի վաւերական պատճէնը. 6 նոյեմբ. թ. 2426։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց Կարսի վիճակի Արդահանի Իմմանուէլ քահանայ Դիմիրջոզլեանին, համաձայն իւր գրաւոր խնդրի, արձակել հոգևոր կոչումից. 6. նոյեմբ. թ. 2429։

Գրութիւն Պարսկա-Հնդկաստանի Առաջնորդ Տ. Սահակ արքեպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց դոհունակութիւն յայտնել Կալկաթայի Հայոց եկեղեցիների կառավարիչներին Տիկին Մուրադեանի որդուն երկու տարի ևս նպաստ տալու առթիւ. 7 նոյեմբ. թ. 2439։

Գրութիւն Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի Վարչութեան անունով, որով ուղարկուեց Եյսկ քաղաքի Մարգարէ պաւագ քահանայ Սուքիասեանի՝ Ճեմարանին նուիրաբերած քառասուն ռուբլին. 8 նոյեմբ. թ. 2440։

Գրութիւն Մոսկուայի Ցարութիւն աւագ քահանայ Պօպովեանի անունով, որով ուղարկուեց Տարօնի վիճակում շինուելիք Վարժարանի նախագիծը և յանձնարարուեց յորդորել Տիկ. Պօպովեանին, որ իւր ամուսնու յիշատակը յաւերժացնելու նպատակով վարժարանի շինութեան համար յատկացրած գումարին մի որոշ գու-

մար և ս աւելացնի, որ նախագծի համաձայն վայելուչ չենք կառուցում. 8 նոյեմբ. Թ. 2442։

Գրութիւն Տիկ. Պօպովեանի անունով, որով յայտնուեց, թէ Տարօնի վիճակում կառուցուելիք վարժարանի նախագիծը ուղարկուեց Պօպովեան քահանային՝ իրան ցոյց տալու համար. 8 նոյեմբ. Թ. 2443։

Գրութիւն Վանի Առաջնորդ Գերապատիւ Տ. Յովսէփ արքեպիսկոպոս Սարաջեանի անունով, որով յանձնարարուեց մեկնել իւր պաշտօնավայրը—Վասպուրական. 8 նոյեմբ. Թ. 2445։

Գրութիւն Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու ծխական Հոգաբարձութեան անունով, որով յանձնարարուեց յայտնել, թէ Կարզախի ծխական դպրոցին հասանելիք նպաստը ինչու չէ տրուել. 15 նոյեմբ. Թ. 2470։

Գրութիւն Կաղկաթայի Տ. Վարդան քահանայ Տ. Վարդանեանի անունով, որով յանձնարարուեց տեղեկութիւն տալ այնտեղ բացուելիք Հայոց օրիորդաց դպրոցի մասին. 15 նոյեմբ. Թ. 2477։

Գրութիւն Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց Սանահնի վանքի վանահօր պաշտօնը կատարել ժամանակաւորապէս. 16 նոյեմբ. Թ. 2479։

Շրջաբերական կոնդակներ Ռուսաստանի թեմական առաջնորդների անունով, որով պատուիրուեց կարգադրել, որ այսուհետև գիւղական քահանաներն առանց հոգևոր իշխանութեան և ծխականների համաձայնութեան մի տեղից մի այլ տեղ չփոխադրուեն. 19 նոյեմբ. Թ. 2489—2494։

Մակագրութիւն Ղարաբաղի կոնսիստորիայի նախագահող Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանի անունով, որով յանձնարարուեց պսակներից աւելորդ 50-ական կոպէկներից գոյացած արդիւնքը յատկացնել թեմական տեսչութեան ծախքերի համար. 22 նոյեմբ. Թ. 2503։

Կոնդակ Տփխիսի Ներսիսեան Հայոց թեմական Դպրանոցի Հոգաբարձութեան անունով, որով Տ. Եփրեմ եպիս-

կոպոսը կարգուեց Հոգաբարձութեան նախագահող՝ թեմի Առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոսի մահուան պատճառով. 22 Նոյեմբ. թ. 2514։

Մակագրութիւն ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց տալ Մայր Աթոռի միաբան հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոս Գառնակերեանի թողած գրամից, միայն այս տարի, նրա քրոջ թոռան ուսման վարձ եօթանասուն հինգ (75) ռուբլի. 23 Նոյեմբ. թ. 2518։

Մակագրութիւն նոյն Սինոդի անունով, որի հետ ուղարկուեց Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի Վարչութեան յայտարարութեամբ ներկայացրած հին և նոր դրամները Մայր Աթոռի թանգարանում պահելու համար. 23 Նոյեմբ. թ. 2523։

Գրութիւն Ատրպատականի Առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսի անունով, որով տեղեկութիւն տրուեց, թէ իւր ներկայացրած թուով 12 ձեռագրերն ստացուել և յանձնուել են Մայր Աթոռի մատենադարանն ի պահ. 23 Նոյեմբ. թ. 2527։

Գրութիւն Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսի անունով, որով ուղարկուեց Եւրոպայի Առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոսի, Տ. Տիրայր վարդապետի հետ ուղարկած եպիսկոպոսական զգեստը Մայր Տաճարում պահելու համար. 23 Նոյեմբ։ թ. 2531։

Հայրապետական գոհունակութիւն եւ օրհնութիւն.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան անունով՝ նրա օգտակար գործունէութեան համար. 19 Նոյեմբ. թ. 2495։